Հարցազրույց «Արմսվիսբանկի» ներդրումային դեպարտամենտի տնօրեն Կարեն Տուրյանի հետ

Արմենակ Չատինյան

«Եթե նայենք ֆինանսական ռացիոնալության տեսակետից, ապա այս տարվա 10% շահաբաժինը տրվել է ընկերության 7 ամսվա գործունեության դիմաց»,- ասում է Կարեն Տուրյանը:

Դեկտեմբերի 1-ին ավարտվեց «Արցախ հէկի» լրացուցիչ թողարկած բաժնետոմսերի ձեռքբերման նախապատվության իրավունքի կիրառման ժամանակահատվածը: Ռեեստրի փակման դրությամբ 1112 բաժնետերերից նախապատվության իրավունքից օգտվել է 50 բաժնետեր, որոնք ձեռք են բերել շուրջ Դ114,5 մլն ընդհանուր ծավալով 103 հազ. հատ բաժնետոմս: Հիշեցնենք, որ «Արցախ հէկի» տնօրենների խորհուրդն օգոստոսի 20-ին որոշում էր ընդունել 1,4 մլն հատ (ընդհանուր առմամբ՝ Դ1,54 մլրդ-ի) ոչ փաստաթղթային սովորական անվանական բաժնետոմսեր տեղաբաշխել: Բաժնետոմսերի ազատ բաժանորդագրությունը սկսվել է դեկտեմբերի 2-ին և տևելու է մինչև դեկտեմբերի 22-ը: Թե ինչու նախապատվության իրավունքից առայժմ օգտվել է 50 բաժնետեր, «Կապիտալի» հետ զրույցում պարզաբանում է «Արցախ հէկի» բաժնետոմսերը տեղաբաշխող «Արմսվիսբանկի» ներդրումային դեպարտամենտի տնօրեն Կարեն Տուրյանը:

-Պարոն Տուրյան, ինչո՞ւ 1112 բաժնետերերից մասնակցել է ընդամենը 50-ը: Արդյոք դա վա՞տ ցուցանիշ է:

- Նախ պետք է հասկանալ, որ այդ հազար բաժնետերերի թվում կան բաժնետերեր, որոնք ունեն ընդամենը մի քանի բաժնետոմս: Ընդհանուր բաժնետերերի թվում մինորիտար բաժնետերերի թիվն էական է: Իրականում, եթե բոլորը օգտվեին նախապատվության իրավունքից, ապա պետք է գնվեր շուրջ Դ240 մլն-ի 202,43 հազ. հատ բաժնետոմս: Լեռնային Ղարաբաղի կառավարությունը, որը խոշոր բաժնետերն է [ԼՂՀ կառավարությանը պատկանում է «Արցախ հէկի» բաժնետոմսերի 85,5%-ը], հրաժարվել է լրացուցիչ թողարկմանը իր կողմից ձեռք բերվելիք բաժնեմասից, և այդ բաժնետոմսերը պետք է տեղաբաշխվեն ազատ բաժանորդագրության միջոցով: Իրականում նախապատվության իրավունքից օգտվելու ժամանակահատվածում տեղաբաշխվել է նախատեսված ծավալի 51%-ը: Ավելի պարզ ասած՝ նախապատվության իրավունքի կիրառման դեպքում տեղաբաշխման բաժնետոմսերի քանակը բաշխվում է բոլոր բաժնետերերի միջև՝ հաշվի առնելով նրանց կողմից տնօրինվող բաժնետոմսերի քանակը: Ինչպես ասացի, կառավարությունը հրաժարվել է իր կողմից ձեռք բերվելիք մասնաբաժնից, և այն հանվել է բաց բաժանորդագրության: Մենք գոհ ենք այդ ցուցանիշից:

-Այնուամենայնիվ, ինչո՞ւ քիչ թվով բաժնետերեր են օգտվել նախապատվության իրավունքից:

-Նախապատվության իրավունքի ողջ իմաստն այն է, որ դուք օգտվում եք դրանից, որպեսզի պահպանեք ձեր մասնաբաժինն ընկերությունում կապիտալի համալրումից հետո: Ընկերության բաժնետոմսերի 2%-ը, օրինակ, իրավունք է տալիս առաջարկել խորհրդի ու վերստուգող հանձնաժողովի անդամի թեկնածություն, և եթե բաժնետերը ցանկանում է պահպանել իր այդ իրավունքը՝ 2%-ի միջոցով, նա լրացուցիչ թողարկմանը ձեռք է բերում իրեն հասանելիք բաժնետոմսերը: Հրաժարվելով այդ բաժնետոմսերից՝ նա կարող է կորցնել իր

իրավունքը, քանի որ կապիտալի ավելացման ժամանակ նվազում է նաև նրա մասնաբաժինը։ Եթե բաժնետերն ունի չնչին մասնաբաժին և այդ մասով չի կարողանում ազդեցություն ունենալ ընկերության որոշումների վրա, ապա նրա մոտ կորչում է նախապատվության իրավունքից օգտվելու հետաքրքրությունը։ Բացի այդ՝ պետք հիշել, որ եթե նախապատվության իրավունքի ժամանակ մեկ բաժնետիրոջ կողմից ձեռք բերվելիք բաժնետոմսերը սահմանափակ են, ապա բաց բաժանորդագրությանը նա կարող է ձեռք բերել ցանկացած քանակության բաժնետոմս։ Այսինքն, եթե բաժնետերը ընկերությունում ցանկանում է ավելացնել իր իրավունքները, նա կարող է օգտվել կամ հրաժարվել նախապատվության իրավունքից և բաց բաժանորդագրությանը ձեռք բերել այնքան բաժնետոմս, որքան ցանկանում է։ Փաստացի եղել են դեպքեր, որ մարդիկ չեն օգտվել նախապատվության իրենց իրավունքից, բայց բաց բաժանորդագրության ժամանակ եկել ու գնել են որոշակի քանակության բաժնետոմսեր։

-Որպես ներդրումային ֆինանսական գործիք՝ որքանո՞վ են «Արցախ հէկի» բաժնետոմսերը գրավիչ, եթե հաշվի առնենք, որ այլ ֆինանսական գործիքներ, օրինակ՝ պետական պարտատոմսերը, ավելի եկամտաբեր են ու քիչ ռիսկային։

-Նախ պետք է հասկանալ, որ պարտատոմսն ունի ժամկետայնություն, իսկ բաժնետոմսը՝ ոչ։ Գնելով պարտատոմսեր՝ դուք վերցնում եք որոշակի ռիսկ՝ կապված այդ ժամկետայնության հետ։ «Արցախ հէկի» բաժնետոմսերը ձեռք են բերել մարդիկ, ովքեր աշխատում են ընկերությունում, մարդիկ, ովքեր օգտվում են ընկերության ծառայություններից, ընկերություններ, որոնք գործընկերային հարաբերություններ ունեն «Արցախ հէկի» հետ, և այլ դրդապատճառներ ունեցողները։ Եթե նայենք ֆինանսական ռացիոնալության տեսակետից, ապա այս տարվա 10% շահաբաժինը տրվել է ընկերության 7 ամսվա գործունեության դիմաց։ Իրականում եթե դա դիտարկենք մեկ տարվա կտրվածքով, ապա շահաբաժինը կազմում է 15%։ Մյուս կողմից՝ բաժնետոմսերը ձեռք էին բերվել Դ1050-ով, այնինչ այսօր բորսայում մեկ բաժնետոմսը կարելի է վաճառել Դ1090-ով և գնել Դ1140-ով։ Մեկ բաժնետոմսի իրական եկամտաբերությունը, ներառյալ՝ կապիտալի աճը, այն անհատի համար, որն այն գնել էր թողարկման ժամանակ, տարեկան եկամտաբերությունը կազմում է 17,5%։ Մենք չենք գնահատում ռիսկայնության մակարդակը։ Միայն կարող ենք նշել, որ դեկտեմբերի 2-ին սկսված բաժնետոմսերի ազատ բաժանորդագրությանը դեկտեմբերի 10-ի դրությամբ մասնակցել են 53 ներդրողներ, որոնք ձեռք են բերել Դ713,5 մլն-ի շուրջ 643 հազ. բաժնետոմս։ Փաստացի, ընդհանուր առմամբ արդեն տեղաբաշխվել է Դ828 մլն-ի 746 հազ. բաժնետոմս։ Հիշեցնեմ, որ լրացուցիչ թողարկմանը նախատեսված է տեղաբաշխել 1,4 մլն հատ (ընդհանուր առմամբ Դ1,554 մլրդ-ի) բաժնետոմս։ Ազատ բաժանորդագրության ժամանակ տեղաբաշխված բաժնետոմսերի ծավալի կեսից ավելին ձեռք են բերել իրավաբանական անձինք, այդ թվում՝ նոր բաժնետերեր, ինչպես նաև հին բաժնետերերից նրանք, ովքեր ցանկանում են ավելացնել իրենց մասնաբաժինը։